https://doi.org/10.59821/18294219-2025.2-moa02

Անահիտ Բաբախանյան
ՀՀ գլխավոր դատախազի օգնական

ՄԱՐԴՈՒ ՕՐԳԱՆՆԵՐԻ ԱՊՕՐԻՆԻ ՇՐՋԱՆԱՌՈՒԹՅԱՆ ՀԱՄԱՐ ՔՐԵԱԿԱՆ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅՈՒՆԸ[1]

Համառոտագիր

Մարդու սաղմի, պտղի, մարդու կամ դիակի բջիջների, հյուսվածքների, օրգանների կամ կենսաբանական նյութերի կամ հեղուկների ապօրինի շրջանառությունը կյանքը և առողջությունը վտանգող հանցագործություններից է, որի կատարումն արդեն իսկ սպառնալիք է օրենքով պաշտպանվող հասարակական հարաբերության համար:

Ուսումնասիրության շրջանակներում որպես տվյալ հանցագործության առարկա դիտարկվել է մարդու օրգանը, և հոդվածում քննարկվում է միայն մարդու օրգանների ապօրինի շրջանառության համար քրեական պատասխանատվության ինստիտուտի էությունը՝ անդրադառնալով թե՛ ներպետական և թե՛ միջազգային իրավակարգավորումներին: Աշխատանքում ներկայացվում է սույն հանցագործության որպես համաշխարհային հիմնախնդիր լինելու հանգամանքը: Համեմատական անցկացնելով նախկին իրավակարգավորումների հետ և անդրադառնալով սույն հանցագործության և մարդու թրաֆիքինգի տարանջատմանը՝ վերլուծության է ենթարկվել հանցագործության քրեաիրավական բնութագիրը: Մասնավորապես, անդրադարձ է կատարվել մարդու օրգանների առևտրային (կոմերցիոն) բնույթի գովազդ իրականացնելու համար օրենսդրությամբ նախատեսված արգելքին և դրա կապակցությամբ առկա օրենսդրական բացերին և հակասություններին, հանցագործության առարկայի շրջանակներում՝ աճեցված արհեստական օրգանների ապօրինի շրջանառության ռիսկերին, հակաիրավական արարքը որակյալ դարձնող հանգամանքների օրենսդրությամբ սպառիչ սահմանված լինելու խնդիրներին:

Կատարված հետազոտության արդյունքում հեղինակն առաջարկել է քրեական պատասխանատվություն նախատեսել նաև աճեցված արհեստական կենսաբանական օրգանների ապօրինի շրջանառության, մարդու օրգանների առևտրային (կոմերցիոն) բնույթի գովազդ իրականացնելու, ինչպես նաև մարդու օրգանների ապօրինի շրջանառությանը միջնորդելու համար: Առաջարկվել է նաև որպես հանցակազմի ծանրացնող հանգամանք նախատեսել հանցավոր արարքի կատարումը հանցավոր կազմակերպության կողմից, հղի կնոջ, անօգնական, խոցելի կամ հանցավորից կախյալ վիճակում գտնվող անձի նկատմամբ:

[1]Հոդվածը ներկայացվել է 11.08.2025թ., գրախոսվել է 16.09.2025թ.:

Հիմնաբառեր– օրգանների թրաֆիքինգ, օրգանների փոխպատվաստում, արհեստականորեն աճեցված օրգաններ, մարդու օրգանների և հյուսվածքների առևտրային (կոմերցիոն) բնույթ կրող գովազդ, փոխպատվաստումային զբոսաշրջություն, «փոխպատվաստումների սև շուկա» կամ «կարմիր շուկա»:

Ներածություն

Օրգանների փոխպատվաստման կարիք ունեցող մարդկանց թիվն օրեցօր ավելանում է, այն պայմաններում, երբ օրգանների «պահանջարկը», ի տարբերություն «առաջարկի», համեմատաբար քիչ է, և այս իրողությունը մարդկանց տանում է իրենց հանցավոր նպատակին հասնելուն ուղղված գործողություններ իրականացնելուն:

Օրգանների ապօրինի շրջանառությունը վտանգավոր է տարբեր էթիկական, իրավական և առողջական ռիսկերի պատճառով, որոնք կապված են շահույթ ստանալու համար օրգաններ գնելու, վաճառելու և այլ գործողությունների հետ: Այս հանցակազմը դրսևորվում է ընդգրկելով տարբեր երկրների տարածքներ՝ պայմանավորված այն հանգամանքով, որ որոշ երկրներում օրգանների առուվաճառքը արգելված չէ օրենսդրությամբ:

Այս հանցագործության «զոհեր» շատ հաճախ դառնում են ֆինանսապես ոչ կայուն վիճակում գտնվող անձինք, որոնք հայտնում են իրենց պատրաստակամությունը օրգանը վաճառելու՝ գումարի ձեռքբերման նպատակով: Այս անհատներին իրենց օրգանների համար օգտագործելը կարող է հանգեցնել ծանր հետևանքների, այդ թվում՝ ֆիզիկական և հոգեբանական վնասների:

Ներկայումս մարդկային օրգանների վերազգային շրջանառությունը աշխարհում, ամենահամեստ հաշվարկներով, տարեկան գնահատվում է մոտ 840 միլիոնից մինչև 1,7 միլիարդ ԱՄՆ դոլար, որը գոյանում է շուրջ 12,000 ապօրինի փոխպատվաստումներից[2]:

Առկա իրավակարգավորումների պայմաններում այս հանցագործության անպատժելիությունը կարող է հանգեցնել մարդու կյանքի և առողջության իրավունքի ոտնահարմանը: Մարդու մարմինը դիտարկվում է որպես «թիրախ» հանցավոր նպատակին հասնելու համար, և այն դուրս է եկել յուրաքանչյուր երկրի սահմաններից ու վերածվել վերազգային հիմնախնդրի, որի հաղթահարման միակ եղանակը բոլոր պետությունների կողմից դրա արգելմանն ուղղված միջոցառումների և խիստ վերահսկողական մեխանիզմների իրագործումն է:

Մարդու օրգանների ապօրինի շրջանառությունը ՀՀ քրեական օրենսգրքում՝ որպես քրեորեն պատժելի արարք նախատեսվել է 2018 թվականից ի վեր, ուստի ՀՀ իրավակիրառ պրակտիկայի համար նշված հանցակազմը համեմատաբար նոր է և քիչ ուսումնասիրված:

Ողջ վերոգրյալով պայմանավորված կարևորում և արդիական ենք համարում այս հանցագործության կապակցությամբ կատարվող ուսումնասիրությունը:

[2] Տե՛ս May C., Transnational Crime and the Developing World. Global Financial Integrity, March 2017:

Հետազոտության հիմնական նպատակը մարդու օրգանների ապօրինի շրջանառության հանցագործության քրեաիրավական վերլուծությունն է և այս ոլորտում քրեական օրենսդրության բարելավմանն ուղղված առաջարկների մշակումը: Նշված նպատակին հասնելու համար աշխատանքի շրջանակներում առաջադրվել են հետևյալ խնդիրները՝ ներկայացնել մարդու օրգանների ապօրինի շրջանառության էությունը, վերլուծել հանցագործության քրեաիրավական բնութագիրը, օրենսդրության կատարելագործման նպատակով ներկայացնել առաջարկներ:

Հետազոտական մաս

Մարդու իրավունքների համընդհանուր հռչակագրով[3] և Սահմանադրությամբ[4] մարդու կյանքի և առողջության պահպանման իրավունքին առնչվող կարգավորումները պարտավորեցնում են պետություններին անհրաժեշտ միջոցներ ձեռնարկել իրենց իրավասության ներքո գտնվող անձանց կյանքը պաշտպանելու համար: Թե՛ 2003 թվականին ընդունված ՀՀ քրեական օրենսգրքով, և թե՛ 2021 թվականին ընդունված ՀՀ քրեական օրենսգրքով ամրագրվել են համապատասխանաբար «Կյանքի և առողջության դեմ ուղղված հանցագործություններ» և «Կյանքը և առողջությունը վտանգող հանցագործությունները» վերտառությամբ գլուխները, որոնցում, ի թիվս այլնի, որոշ տարբերություններով անդրադարձ է կատարվել մարդու օրգանների ապօրինի շրջանառությանը:

Մարդու օրգանների ապօրինի շրջանառությունը հայեցակարգվում է որպես այլասերված հանցավոր երևույթ, սոցիալական շեղում, որը հեռու է փոխպատվաստման բժշկության էթիկական տիրույթից[5]:

Մարդու օրգանների ապօրինի շրջանառությունը (թրաֆիքինգը[6]), որը հայտնի է նաև «փոխպատվաստումների սև շուկա» կամ «կարմիր շուկա» անվանումներով, ի թիվս այլնի, ենթադրում է ազգային առողջապահական համակարգից դուրս մարդկային օրգանների, հյուսվածքների կամ մարմնի այլ բաղկացուցիչների վաճառք:

Փոխպատվաստումը իրենից ենթադրում է վնասված կամ բացակայող հյուսվածքների կամ օրգանների փոխարինում: Ամբողջ աշխարհում փոխպատվաստման արագ զարգացման շնորհիվ, օրգանների փոխպատվաստման վիրահատությունների կարիք ունեցող հիվանդների ահռելի թիվը նպաստել է մարդու օրգան-

[3]Տե՛ս Մարդու իրավունքների համընդհանուր հռչակագիր, ընդունվել է 10.12.1948., ուժի մեջ է մտել 10.12.1948.: 217 Ա III, Հիմնական ակտ (10.12.1948-մինչ օրս).հ. 3:

[4] Տե՛ս ՀՀ Սահմանադրություն, ընդունվել է 06.12.2015թ., ուժի մեջ է մտել 22.12.2015թ.: ՀՀՊՏ 2015.12.21/Հատուկ թողարկում Հոդ 1118, հ 24:

[5] Տե՛ս Columb S., Excavating the organ trade: an empirical study of organ trading networks in Cairo, Egypt 2016թ, էջ 5:

[6] Տե՛ս International Organ Trafficking: In Brief, 2021թ International Organ Trafficking: In Brief - EveryCRSReport.com (accessed՝ 01.07.2025թ.)

ների և (կամ) հյուսվածքների պահանջարկի աճին, որն էլ հանգեցրեց մարդու օրգանների ապօրինի շրջանառության առաջացմանն ու տարածմանը[7]:

Այսպես կոչված «պահեստային» մարմինների պահանջարկը հանգեցրել է ոչ միայն մարդու օրգանների և հյուսվածքների իրավական շրջանառության ակտիվացմանը, այլև մարդու օրգանների «սև» կամ «կարմիր» շուկայի ձևավորմանը և զարգացմանը: Այդ է պատճառը, որ վերջին տասնամյակների ընթացքում միջազգային կառույցների, մասնավորապես՝ Եվրոպայի Խորհուրդի, Եվրոպայի անվտանգության և համագործակցության կազմակերպության, ՄԱԿ-ի Գլխավոր ասամբլեայի և այլ կազմակերպությունների կողմից մշակվել են մի շարք բարոյական և իրավական չափանիշներ, որոնք արգելում են մարդու մարմնի մասերի վաճառքը, մարդկանց թրաֆիքինգը՝ օրգանները վերցնելու նպատակով: Այդպիսիք են «Մարդկանց թրաֆիքինգի կանխարգելման և դրա դեմ պայքարի և դրա զոհերի պաշտպանության մասին» ԵՄ դիրեկտիվը (2011/36/ԵՄ), 2005 թվականին ընդունված «Մարդկանց թրաֆիքինգի դեմ գործողությունների մասին» ԵԽ կոնվենցիան, որոնցով ամրագրվում է, որ մարդկանց թրաֆիքինգի համատեքստում օրգանների հեռացումը քրեական հանցագործություն է, նույնիսկ այն դեպքում, երբ «զոհը» տվել է իր համաձայնությունը: Այս ոլորտում մեծ ներդրում է ունեցել նաև Առողջապահության համաշխարհային կազմակերպությունը (ԱՀԿ), որի կողմից 2010 թվականին մշակվել է օրգանների փոխպատվաստման հիմնարար սկզբունքների թիվ WHA63.22 բանաձևը[8]: Մարդու օրգանների թրաֆիքինգի դեմ արդյունավետ ռազմավարության փորձ կատարվեց նաև «Օրգանների թրաֆիքինգի և փոխպատվաստումային զբոսաշրջության մասին» ստամբուլյան հռչակագրով (այսուհետ նաև՝ Ստամբուլյան հռչակագիր)[9]:

Թեև փոխպատվաստման ենթակա օրգանների անհրաժեշտ քանակի բացակայությունը համաշխարհային բնույթ է կրում, այդուհանդերձ, մարդկային օրգանների առևտուրն անօրինական է համարվում գրեթե բոլոր երկրներում: Թերևս, բացառություն է Իրանի Իսլամական Հանրապետությունը, որտեղ դեռևս 1988 թվականին օրինականացվել է նյութական փոխհատուցման դիմաց երիկամի կամովին նվիրաբերումը կենդանի դոնորների կողմից[10]:

Հարկ է նշել, որ Կառավարությունը 2023 թվականի հունվարի 5-ի թիվ 31-Լ որոշմամբ կարևորել է «Մարդու օրգանների թրաֆիքինգի դեմ» Եվրոպայի

---

[7] Տե՛ս Галеева Г.Р. Общая характеристика возникновения и обострения проблемы незаконного транснационального оборота органов человеческого тела, УДК: 341+349 ББК: 67.412.1 2016. էջ 4:

[8] Տե՛ս Who guiding principles on human cell, tissue and organ transplantation, WHO/HTP/EHT/CPR/2010.01 https://iris.who.int/bitstream/handle/10665/341814/WHO-HTP-EHT-CPR-2010.01-eng.pdf?sequence=1(acessed՝ 06.07.2025.).

[9] Տե՛ս The declaration of Istanbul on organ trafficking and transplant tourism, (convened by The Transplantation Society and International Society of Nephrology in Istanbul, Turkey, April 30- May 2, 2008:

[10] Տե՛ս Боровых Я.Ф. Торговля человеческими органами, 2015. էջ 2:

Տե՛ս May C. Transnational Crime and the Developing World. Global Financial Integrity, March 2017, էջ 104:

Տե՛ս Movassagh H. human organ donations under the "Iranian model": a rewarding scheme for U.S. 2016., https://www.latimes.com/world/middleeast/la-fg-iran-kidney-20171015-story.html (acessed՝ 10.07.2025.).

Խորհուրդի կոնվենցիայի[11] (այսուհետ նաև՝ Կոնվենցիա) վավերացումը, որն անհրաժեշտ իրավական հիմք կհանդիսանա Հայաստանի Հանրապետությունում այս ոլորտում գործող իրավական ակտերի և մեխանիզմների վերանայման ու բարելավման համար:

Մարդու օրգանների ապօրինի շրջանառության դեմ արդյունավետ ռազմավարության համար անհրաժեշտ էին իրավականորեն ամրագրված առանձին գործիքներ, որոնք նախատեսվեցին նաև 2021 թվականին ընդունված ՀՀ քրեական օրենսգրքով[12] (այսուհետ նաև՝ Օրենսգիրք), որի 183-րդ հոդվածը պատասխանատվություն է նախատեսում «մարդու սաղմը, պտուղը, մարդու կամ դիակի բջիջը, հյուսվածքը, օրգանը, կենսաբանական նյութերը կամ հեղուկներն ապօրինի ձեռք բերելու, իրացնելու, պահելու, փոխադրելու կամ առաքելու համար»: Նույն հոդվածի երկրորդ մասը ամրագրում է այն ծանրացնող հանգամանքների սպառիչ ցանկը, որոնց առկայության դեպքում նախատեսվում է ավելի խիստ քրեական պատասխանատվություն:

Ինչպես նախկին քրեական օրենսգրքով, այնպես էլ գործող Օրենսգրքով ամրագրվել են որոշակի հանցագործություններ, որոնք նպատակաուղղված են մարդու օրգանը վերցնելուն: Այդպիսի հանցագործություններից է սպանությունը, առողջությանը ծանր, միջին ծանրության վնաս պատճառելը, թրաֆիքինգը: Ընդ որում, հարկ է նշել, որ թվարկված հանցագործություններում մարդու օրգանը վերցնելը դիտվում է որպես տվյալ հանցանքը որակյալ դարձնող հանգամանք (նշյալը ամրագրված է Օրենսգրքի 155-րդ հոդվածի, 166-167-րդ հոդվածների 2-րդ մասում):

Այսպես, Օրենսգրքի 155-րդ հոդվածի 2-րդ մասի 16-րդ կետը պատասխանատվություն է նախատեսել, ի թիվս այլնի, տուժողի օրգանը վերցնելու նպատակով սպանության համար:

Ավելին, Օրենսգիրքը առողջությանը ծանր, ինչպես նաև միջին ծանրության վնաս պատճառելու պարագայում նույնպես օրգանները վերցնելու նպատակը դիտարկել է որպես այդ հանցագործությունները ծանրացնող հանգամանք:

Կարևոր է նշել, որ որակյալ հանցակազմի դրսևորման համար էական է, որ հանցավորի դիտավորությունը ի սկզբանե առկա լինի, այսինքն սպանությունը կամ վերը թվարկված գործողությունները հանցավորի կողմից կատարվեն՝ նախապես ունենալով օրգանը վերցնելու մտադրություն:

Ինչպես նշվեց օրգաններ վերցնելուն նպատակաուղղված հանցագործություն է նաև թրաֆիքինգը: 2003 թվականին ընդունված ՀՀ քրեական օրենսգրքի 132-րդ հոդվածի 4-րդ մասի համաձայն՝ շահագործում է համարվում այլ անձի՝ պոռնկության շահագործումը կամ սեքսուալ շահագործման այլ ձևերը, հարկադիր աշխատանքը կամ ծառայությունները, ստրկության կամ ստրկությանը նմանվող

[11] Տե՛ս Council of Europe Convention against Trafficking in Human Organs, Santiago de Compostela, 25.III.2015, Council of Europe Treaty Series - No. 216:

[12] Տե՛ս ՀՀ քրեական օրենսգիրք, ՀՕ-199-Ն, Միասնական կայք 2021.05.17-2021.05.30, ընդունվել է 05.05.2021, ուժի մեջ մտել 01.07.2022:

վիճակի մեջ դնելը, առքը կամ վաճառքը, օրգանները կամ հյուսվածքները վերցնելը: Սրանից կարելի է եզրակացնել, որ տվյալ հանցանքի առարկան մարդն է, և քրեաիրավական պատասխանատվության էր հանգեցնում միայն դրանք վերցնելը, այսինքն, այս առումով նախկին իրավակարգավորումներով օրենսդրական բացն ակնհայտ էր, քանի որ որպես հանցագործության կատարման եղանակներ 2018 թվականի ապրիլի 7-ի խմբագրությամբ նախկին քրեական օրենսգրքի 125.1 հոդվածով չէին նախատեսվել օրգանների առաքումը, փոխադրումը, պահումը, որոնք արդեն նախատեսվել են Օրենսգրքի նոր խմբագրությամբ՝ առանձին հանցակազմով:

Նախկին կարգավորումների համատեքստում անդրադառնանք ՀՀ դատական պրակտիկային: Դատական պրակտիկայում ունեցել ենք ընդամենը մեկ գործ[13] կապված օրգանները վերցնելու հետ՝ որպես մարդու շահագործման ձև, որը դատարանի կողմից որակվել էր 132-րդ հոդվածի 2-րդ մասի 1-ին, 2-րդ և 6-րդ կետերով: Նշված գործի շրջանակներում հանցավորը օգտվել էր անձանց խոցելի վիճակից, որը այնպիսի իրավիճակի չարաշահում է, երբ այդ վիճակում գտնվող անձը չունի որևէ այլ իրական և ընդունելի այլընտրանք, քան շահագործման ենթարկելը: Տվյալ գործի փաստական հանգամանքներից բխում է, որ հանցավորի գործողությունները դրսևորվել էին ոչ միայն օրգանները վերցնելով, այլև դրանք իրացնելով, որի հավաստումը եղել է պարբերաբար դրա դիմաց գումար ստանալը, իսկ նման օրենսդրական ձևակերպման պարագայում իրացնելը չէր կարող դիտարկվել որպես հանցակազմի օբյեկտիվ կողմի դրսևորում, քանի որ 2012 թվականի հոկտեմբերի 18-ի խմբագրությամբ նախկին քրեական օրենսգրքով նախատեսված չէր մարդու օրգանների ապօրինի շրջանառության հանցակազմը, իսկ 132-րդ հոդվածի դիսպոզիցիայում «իրացնելը» որպես հանցագործության հատկանիշ նշված չի եղել:

Ուսումնասիրելով նախկին քրեական օրենսգրքի կարգավորումները և դատական պրակտիկան՝ կարող ենք հանգել այն եզրակացության, որ մինչև 2018 թվականի ապրիլի 7-ի խմբագրությամբ ՀՀ քրեական օրենսգրքի ընդունումը օրգանների ապօրինի շրջանառությունը, ունենալով հանրային բարձր վտանգավորություն, դիտարկվել է որպես որոշ հանցագործությունների նպատակ՝ ներառվելով հոդվածների դիսպոզիցիայում և ամբողջովին չբացահայտելով դրա բոլոր ձևերը:

Այսինքն, թե՛ նախկին և թե՛ նոր քրեական օրենսգիրքը, ավելին միջազգային փաստաթղթերը ևս տարբերակում են մարդու օրգանների հետ կապված հանցագործությունների դրևսորման երկու ձև՝ մարդու օրգանների թրաֆիքինգը (THO) և օրգանները վերցնելու նպատակով մարդկանց թրաֆիքինգը (THBOR).

[13] Տե՛ս Երևանի քաղաքի առաջին ատյանի ընդհանուր իրավասության քրեական դատարանի 2012 թվականի հուլիսի 31-ի դատավճիռը թիվ ԵԿԴ/0107/01/12 քրեական գործ.

սրանք հանցավորության ամենադաժան ձևերից են, որոնք համաշխարհային մտահոգություն են առաջացնում[14]:

Օրգանները վերցնելու նպատակով մարդկանց թրաֆիքինգը հստակորեն սահմանվել է ՄԱԿ-ի «Անդրազգային կազմակերպված հանցագործությունների դեմ պայքարի մասին» կոնվենցիայի Պալերմո արձանագրության[15] մեջ: Համաձայն այս արձանագրության՝ օրգանը վերցնելու նպատակով մարդկանց թրաֆիքինգը սահմանվել է որպես թրաֆիքինգի կոնկրետ ձև, որտեղ խարդախության և հարկադրանքի միջոցով միջազգայնորեն գործող ցանցերը ծայրահեղ աղքատության մեջ գտնվող անձանց ստիպում են օրգան վաճառել:

Նման ձևակերպման պայմաններում փոխպատվաստման զբոսաշրջության դեպքերում, երբ օրգանը ձեռք էր բերվում անձի համաձայնությամբ՝ ֆինանսական գործարք կնքելով, այն չէր տեղավորվում նշյալի սահմաններում, քանի որ հարկադրանքի և խաբեության չափանիշները բացակայում էին, ուստի այն դուրս էր մնում հանցագործության նկարագրից: Այս խնդիրը լուծվեց, երբ սահմանվեց օրգանների ապօրինի շրջանառության ձևը, որի դեպքում օրգանների աղբյուր են հանդիսանում կենդանի կամ մահացած անձինք, և այս դեպքում խաբեությունը և բռնությունը, ինչպես նաև մարդու թրաֆիքինգի դրսևորման այլ ձևերը պարտադիր հատկանիշներ չեն:

Այս երկու հանցագործություններն ունեն որոշակի տարբերություններ, մասնավորապես, օրգանների ապօրինի շրջանառության դեպքում հանցագործության նպատակը և առարկան մարդու օրգաններն են, մինչդեռ, մարդկանց թրաֆիքինգի դեպքում օրգանները վերցնելու նպատակով հանցագործության առարկան անձն է:

Մարդու թրաֆիքինգը դրսևորվում է մարդուն շահագործելու եղանակով, որպիսին է համարվում մարդու օրգանը, հյուսվածքը վերցնելը, որի դեպքում պարտադիր են դիտարկվում որոշակի գործողությունների կատարումը, մասնավորապես՝ բռնության գործադրումը կամ դրա սպառնալիքը, հարկադրանքի այլ ձևերը, առևանգումը, խաբեությունը, վստահությունը չարաշահելը և այլ գործողությունները, որոնք հստակ թվարկված են ՀՀ քրեական օրենսգրքի 188-րդ հոդվածի 1-ին մասում:

Այսինքն, մարդու օրգանը վերցնելու դեպքում մարդու շահագործման հանցակազմը առկա կլինի, եթե դա զուգորդվի ՀՀ քրեական օրենսգրքի 188-րդ հոդվածի 1-ին մասով նախատեսված գործողություններով:

Ինչ վերաբերում է օրգանների ապօրինի շրջանառությանը, ապա վերջինիս առանձնահատկությունը կայանում է նրանում, որ այն չի ներառում շահագործման տարրեր: ՀՀ քրեական օրենսգրքի 183-րդ հոդվածը նախատեսում է պատաս-

[14] Տե՛ս Negri S. The Criminal Justice Response to Organ Trafficking and Trafficking in Human Beings for Organ Removal էջ 2, https://www.researchgate.net/publication/322745882_The_Criminal_Justice_Response_to_Organ_Trafficking_and_Trafficking_in_Human_Beings_for_Organ_Removal (accessed՝ 01.07.2025).

[15] Տե՛ս United Nation Convention against Organized Crime, Palermo protocol, Palermo, Italy, 12-15 December, 2000:

խանատվություն օրգանները ապօրինի ձեռք բերելու, իրացնելու, պահելու, փոխադրելու կամ առաքելու համար՝ առանց մարդու նկատմամբ շահագործման կիրառման: Այսինքն, օրենսդիրը քրեականացնում է այն դեպքերը, երբ օրգանների շրջանառությունը տեղի է ունենում որպես ինքնուրույն հակահիրավական երևույթ, սակայն առանց անձի կամքին ուղղված այլ հանցավոր ներգործության:

Հետևաբար, եթե անձի նկատմամբ կատարվի վերը թվարկված գործողություններից մեկը, օրինակ՝ մարդու օրգանը վերցվի վերջինիս բռնության ենթարկելու կամ խաբեության միջոցով, առկա կլինի «մարդու թրաֆիքինգը կամ շահագործումը» հանցակազմը. մարդու օրգանների ապօրինի շրջանառության հանցակազմը կբացակայի, քանի որ Օրենսգրքի 183-րդ հոդվածով նախատեսված հանցակազմի դրսևորման համար շահագործման առկայությունը պարտադիր տարր չէ:

Այսինքն, եթե մարդու թրաֆիքինգի առարկան մարդն է, որը շահագործվում է նրա օրգանը վերցնելու նպատակով, ապա «օրգանների ապօրինի շրջանառությունը» հանցագործության առարկան օրգանն է, որի դեպքում անձի շահագործումը բացակայում է:

Օրգանների ապօրինի շրջանառության դրսևորման հիմքում ընկած է «ստվերային փոխպատվաստումների» իրականացումը, ինչպես նաև փոխպատվաստումների համար նախատեսված իրավական հիմքերի նկատմամբ արհամարհանքի վառ դրսևորումը:

Հայաստանի Հանրապետությունում փոխպատվաստումների ոլորտը կարգավորվում է «Մարդուն օրգաններ և (կամ) հյուսվածքներ փոխպատվաստելու մասին» օրենքով (այսուհետ նաև՝ Օրենք), որով սահմանվում են փոխպատվաստումների իրականացման պայմանները:

Օրենքը կոնկրետ նշում է այն էական պայմանները, որոնց առկայության դեպքում միայն կարող է կատարվել օրգանները վերցնելու գործընթացը, դրանցից է՝ առանց օրգանը վերցնելու և փոխպատվաստում կատարելու այլ միջոցառումներով հիվանդի կյանքը փրկելու, առողջությունը վերականգնելու երաշխիքների բացակայությունը: Բացի այդ Օրենքը բացառում է օրգանները շահույթի աղբյուր դարձնելը[16]: Այսինքն, օրգանը վերցնելու համար դրամական կամ որևէ այլ առավելություն չպետք է առաջարկվի կամ պահանջվի:

Նախքան փոխպատվաստման համար օրգանները վերցնելը հիշյալ Օրենքը կարևորում է նաև փոխպատվաստման անհրաժեշտության մասին բժշկական եզրակացության առկայությունը, ինչպես նաև ռեցիպիենտի (ֆիզիկական անձ, որին բուժական նպատակով պետք է փոխպատվաստվեն օրգաններ և (կամ) հյուսվածքներ) կամ նրա 18 տարին լրացած չլինելու դեպքում կամ օրենքով սահմանված կարգով հաշմանդամություն ունեցող անձ ճանաչված լինելու դեպքում ծնողների կամ օրինական ներկայացուցիչների գրավոր համաձայնությունը (հոդված 6):

---

[16] Տե՛ս «Մարդուն օրգաններ և (կամ) հյուսվածքներ փոխպատվաստելու մասին» օրենք, ՀՕ-324, ընդունվել է 16.04.2002., ուժի մեջ է մտել 25.11.2002, ՀՀՊՏ 2002.05.29/16(191) Հոդ.347:h.2:

Կարևոր է ընդգծել, որ դոնորը պետք է տեղյակ լինի ոչ միայն օրգանի հեռացման նպատակի և բնույթի, ինչպես նաև դրա հետևանքների և ռիսկերի, այլև իր պաշտպանության համար օրենքով սահմանված իրավունքների և երաշխիքների մասին: Կենդանի դոնորից օրգան հեռացնելը կարող է իրականացվել միայն անձի ազատ, տեղեկացված և կոնկրետ համաձայնությունը տալուց հետո[17]: Ընդ որում, այս չափանիշների առկայության համար անհրաժեշտ է, որ անձի համաձայնությունը դրսևորվի հարկադրանքի կամ խարդախության բացակայության պայմաններում:

Բացի վերոնշյալից Օրենքը ամրագրում է այն հանգամանքները, որոնց առկայությունը անհնար է դարձնում կենդանի դոնորից օրգան վերցնելու գործընթացը, այդպիսիք են անձի հոգիությունը, սահմանված կարգով հաշմանդամ ճանաչված լինելը, պատանդի կարգավիճակում լինելը և այլն[18]: Օրգաններ վերցնելը չի թույլատրվում նաև այն դեպքում, երբ պարզվում է, որ դրանք պատկանում են ռեցիպիենտի կյանքին և առողջությանը վտանգ ներկայացնող հիվանդությամբ տառապող անձի:

Ողջ վերոգրյալը ամբողջացնելով՝ նշենք, որ, ի թիվս այլնի, սրանք այն պայմաններն են, որոնց պահպանման դեպքում կենդանի դոնորից օրգան վերցնելը չի հանգեցնում պատասխանատվության առաջացման, իսկ ինչ վերաբերում է դիակային դոնորին, ապա նրանից օրգան վերցնելու առաջնային պայմանը ուղեղային մահվան փաստը հաստատելն է և մինչև մահը նրա կողմից տրված գրավոր համաձայնությունը իր օրգանները վերցնելու կապակցությամբ, իսկ դրա բացակայության դեպքում օրգանները կարող են վերցվել նրա հարազատների համաձայնությամբ[19]:

Օրենսգրքի 183-րդ հոդվածը պատասխանատվություն է նախատեսում մի շարք առարկաների ապօրինի շրջանառության համար, որը ընդգրկում է մարդու սաղմը, պտուղը, մարդու կամ դիակի բջիջը, հյուսվածքը, օրգանը, կենսաբանական նյութերը կամ հեղուկները: Ինչպես նշվեց սույն ուսումնասիրության շրջանակներում որպես տվյալ հանցագործության առարկա դիտարկվել է մարդու օրգանը, հետևաբար, նախ անհրաժեշտ է բացահայտել օրգանի հասկացության էությունը:

Օրենքի 1-ին հոդվածի համաձայն՝ օրգանը տարբեր հյուսվածքներից բաղկացած (որոնցից մեկը գլխավորն է՝ առաջատարը) և որոշակի ձև ունեցող մարմնի մաս է, որը տարբերվում է իր հստակ կառուցվածքով, օրգանիզմում զբաղեցրած որոշակի տեղով և կենսագործունեությամբ.

---

[17] Տե՛ս Pietrobon A. Challenges in Implementing the European Convention against Trafficking in Human Organs, Cambridge University Press: 29 April 2016.էջ 6:

[18] Տե՛ս «Մարդուն օրգաններ և (կամ) հյուսվածքներ փոխպատվաստելու մասին» օրենք, ՀՕ-324, ընդունվել է 16.04.2002., ուժի մեջ է մտել 25.11.2002, ՀՀՊՏ 2002.05.29/16(191) Հոդ.347:h 11:

[19] Տե՛ս «Մարդուն օրգաններ և (կամ) հյուսվածքներ փոխպատվաստելու մասին» օրենք, ՀՕ-324, ընդունվել է 16.04.2002., ուժի մեջ է մտել 25.11.2002, ՀՀՊՏ 2002.05.29/16(191) Հոդ.347, h.5,6:

Այսինքն, օրգանը օրենսդրությամբ ներկայացվում է որպես օրգանիզմի մաս, որը ունի որոշակի ձև, կառուցվածք, տեղադրություն և կատարում է որոշակի գործառույթ:

Հատկանշական է, որ ՀՀ քրեական օրենսգիրքը չի մատնանշում օրգանների տեսակները, ուստի քննարկվող հանցագործության առարկա պետք է դիտարկել մարդու օրգանիզմի բոլոր օրգանները՝ անկախ փոխպատվաստման ենթակա օրգանների ցանկից:

Կարևոր է քննարկման առարկա դարձնել նաև այն հանգամանքը, արդյոք հանցակազմի առարկա հանդիսացող օրգան հասկացությունը ընդգրկում է աճեցված արհեստական օրգանների հասկացությունը:

Գոյություն ունեն մի շարք այլընտրանքային եղանակներ լուրջ վնասվածքների դեպքում հիվանդ օրգանիզմի օրգանների գործառույթները վերականգնելու համար: Այս միջոցներից է աճեցված արհեստական օրգանների օգտագործումը: Պրոֆեսոր Ա.Վ.Ադասկինի կարծիքով նախատեսված այլընտրանքային եղանակներից ամենաարդյունավետը արհեստական օրգանների աճեցումն է[20]:

Ընդհանրապես արհեստական օրգանը մարդու կողմից ստեղծված միջոց է՝ նախատեսված հիվանդ մարմնի մասի մշտապես կամ ժամանակավորապես փոխարինման համար[21]: Արհեստական օրգանները կարելի է բաժանել երեք հիմնական դասի, որոնք են՝ մեխանիկական՝ պատրաստված անշունչ պոլիմերներից (այսինքն՝ պլաստմասսայից) և (կամ) մետաղներից, բիոմեխանիկական՝ պատրաստված մասամբ կենդանի բջիջներից և անշունչ պոլիմերներից և (կամ) մետաղներից, կենսաբանական (այսինքն՝ բիոարհեստական), պատրաստված կենդանի բջիջներից, կենսաքայքայվող պոլիմերներից և (կամ) մետաղական տարրերից[22]:

Արհեստական օրգանները կարելի է աճեցնել ինչպես մարդու մարմնում, այնպես էլ մարմնից դուրս: Երկրորդ դեպքում արհեստական օրգանների աճեցման հիմք է մարդու օրգանը կամ դրա մասը, բացի այդ կենսաբանական օրգանների աճեցման համար մշակվել են մի շարք մեթոդներ, օրինակ՝ օգտագործվում են հատուկ սարքեր, որոնք գործում են 3D տպիչի սկզբունքով[23]:

Հատկանշական է, որ գիտնականներին հաջողվել է աճեցնել արհեստական լյարդ, որի համար օգտագործվել են լյարդի ոչ բջջային կաղապարները (бесклеточный каркас печени), որից նախօրոք հեռացվել է ամբողջ հյուսվածքը,

---

[20] Տե՛ս Адаскин А. В. Дистанционный мониторинг пациентов с системой длительной механотронной поддержки кровообращения / А. В. Адаскин, К. Н. Дозоров, И. А. Филатов, Г. П. Иткин // Вестник трансплантологии и искусственных органов. – 2016. – Т. 8, № 2. – С. 65–73.:

[21] Տե՛ս World's Largest Database of Information Science & Technology Terms & Definitions, https://www.igi-global.com/dictionary/artificial-organs/1524 (accessed՝ 01.07.2025թ.).

[22] Տե՛ս Bioartificial Organ Manufacturing Technologies:https://www.ncbi.nlm.nih.gov/pmc/articles/PMC6322143/: (accessed՝ 10.07.2025).

[23] Տե՛ս Белоусова Е. В. Виноградова Л. С. Создание искусственных органов человека как перспективный способ совершенствования его природы, 2019. С. 110-111, https://vestnik.gu-ural.ru/documents/articles/2019/2/2019-2-belousova-vinogradova.pdf. (доступ՝ 08.07.2025).

մնացել են միայն արյան անոթների սպիտակուցային կառուցվածքները և այլ օրգան բաղադրիչներ[24]: Արհեստական օրգանների տեղադրման վերաբերյալ միջազգային ոլորտում առկա է նույնիսկ կիրարկված պրակտիկա (կատարվել էր արհեստական օրգանի իմպլանտացիա (տեղադրում))[25]:

Վերոգրյալից ակնհայտ է, որ կենսաբանական արհեստական օրգանների աճեցման համար օգտագործվում են մարդու օրգանները կամ դրանց բաղադրիչները:

Օրենքով օրգանը հանդիսանում է օրգանիզմում գտնվող մարմնի մաս և ենթադրում նրա բնական վիճակում լինելու հանգամանքը, իսկ կենսաբանական արհեստական օրգանները ստեղծվում են մարդու աշխատանքի միջոցով՝ օգտագործելով մարդու օրգանները կամ դրանց մասերը, և նրանց բնական վիճակում գտնվելը բացառվում է: Ստացվում է՝ «արհեստական օրգան» հասկացությունը չի դիտարկվում «օրգան» հասկացության ներքո:

2002 թվականի նոյեմբերի 25-ի խմբագրությամբ «Մարդուն օրգաններ և (կամ) հյուսվածքներ փոխպատվաստելու մասին» օրենքի 3-րդ հոդվածը, ի սկզբանե, նախատեսում էր կարգավորում, այն մասին, որ մարդուն կարող են փոխպատ-վաստվել արհեստական և կենդանիներից վերցված օրգաններ ու հյուսվածքներ: Հետագայում օրենքում կատարված փոփոխությունների արդյունքում վերացվել է այս կարգավորումը:

Բնական օրգանների սակավությունը բժշկության մեջ կարող է հանգեցնել կենսաբանական արհեստական օրգանների աճեցմանը: Ընդ որում բնական օրգանների ապօրինի շրջանառության արգելման պարագայում, կարող են առաջանալ արհեստական օրգանների աճեցման ընդհատակյա գործունեությամբ զբաղվելու ռիսկեր, որոնք կարող են կատարվել շահույթ ստանալու նպատակով: Բացի այդ, դրա շրջանառությունը կարող է հանգեցնել որոշակի առողջական խնդիրների առաջացման՝ պայմանավորված օրգանները աճեցնելու համար օգտագործվող բջիջների անհամատեղությամբ:

Վերոնշյալի կապակցությամբ անհրաժեշտ է քննարկել նաև այն հիմնահարցը, արդյոք աճեցված արհեստական օրգանների քննարկվող հանցակազմի առարկա հանդիսացող օրգանների ներքո դիտարկելը չի հակասի Կոնվենցիայով ամրագրված կարգավորումներին:

Կոնվենցիայի 2-րդ հոդվածի 2-րդ մասի համաձայն՝ մարդու օրգան է համարվում նաև օրգանի այն մասը, եթե նրա գործառույթը օգտագործվում է այն նույն նպատակով ինչ մարդու մարմնի ամբող օրգանը: Ստացվում է՝ Կոնվենցիան օրգան է դիտարկում նաև դրա մասը:

---

[24] Տե՛ս Материалы для создания искусственных органов. Пересадка органов – выращивание органов для человека. Гибриды среди нас, 2020թ. https://dzen.ru/a/XnzaWvYqbXTIAYM0 (доступ՝ 15.07.2025).

[25] Տե՛ս Francis L. P. Artificial and transplanted organs: movable parts and the unmoving law էջ 2, 41, https://collections.lib.utah.edu/dl_files/d9/3c/d93c0ad84136b70954f82d914c07c6a2574b9678.pdf (accessed՝ 01.07.2025).

Ինչպես նշվեց վերևում, արհեստական օրգանները կարող են աճեցվել մարդու օրգանների մասերի հիման վրա, որը Կոնվենցիայով արդեն իսկ դիտարկվում է օրգան:

Այսինքն, կարելի է եզրակացնել, որ աճեցված կենսաբանական արհեստական օրգանները որպես հանցագործության առարկա դիտարկելը չի հակասի Կոնվենցիայի կարգավորումներին, քանի որ այն ստեղծվում է օրգանների այնպիսի մասերի հիման վրա, որոնք Կոնվենցիայով արդեն իսկ դիտարկվում են որպես մարդու օրգան: Աճեցված օրգանը պարունակում է մարդու օրգանիզմը կազմող օրգանի մի մասը և կատարում նույն գործառույթները, ինչ բնական վիճակում գտնվող օրգանը:

Վերոնշյալի կապակցությամբ անհրաժեշտություն է առաջանում բարձրացնելու աճեցված արհեստական օրգանների ապօրինի շրջանառության հիմնահարցը, ուստի առաջարկում ենք Օրենքով փոխպատվաստման օրգաններ դիտարկել նաև աճեցված կենսաբանական արհեստական օրգանները, ինչպես նաև Օրենսգրքի 183-րդ հոդվածում առանձնահատուկ վկայակոչել նաև աճեցված արհեստական օրգանների ապօրինի շրջանառության մասին, քանի որ բլանկետային իրավանորմում օրգանը հանդես է գալիս որպես օրգանիզմի մաս, ինչը վկայում է դրա բնական վիճակում գտնվելու մասին, իսկ արհեստական օրգանը մարդու կողմից աճեցված օրգան է, որը նախատեսված է բնական օրգանի փոխարինման համար կամ նախատեսել առանձին հանցակազմ աճեցված արհեստական օրգանների ապօրինի շրջանառության վերաբերյալ:

Անդրադառնանք ՀՀ քրեական օրենսգրքի 183-րդ հոդվածով նախատեսված քրեահրավական արարքի օբյեկտիվ կողմի դրսևորումներին, որպիսին է օրգանը ապօրինի ձեռք բերելը:

Որպեսզի օրգանի ձեռքբերումը համարվի ապօրինի, պետք է խախտված լինեն «Մարդուն օրգաններ և (կամ) հյուսվածքներ փոխպատվաստելու մասին» օրենքով ամրագրված անհրաժեշտ պայմանները:

«Ձեռք բերել» հասկացությունը կարող է մեկնաբանվել, որպես հանցագործության առարկան անձի տիրապետության տակ դարձնելու գործընթաց: Սա այնպիսի հատուցվող կամ անհատուցելի գործողության կատարումն է, որով անձը ապահովում է հանցագործության առարկային տիրանալու հնարավորությունը: Ուստի այն կարող է դրսևորվել տարբեր եղանակներով՝ հանցագործության առարկան գնելու, նվեր ստանալու, փոխանակելու և նմանատիպ այլ գործողությունների միջոցով:

Կարևոր է այն հարցի պարզաբանումը, արդյոք օրգանը և (կամ) հյուսվածքը հեռացնելը կամ վերցնելը հանդիսանում են այս հանցակազմի դրսևորումներ:

Օրենսգրքի 188-րդ հոդվածի 4-րդ մասը քրեական պատասխանատվություն է նախատեսում մարդու օրգանները վերցնելու նպատակով անձի շահագործման համար, որը դրսևորվում է բռնություն գործադրելով, կամ դա գործադրելու սպառնալիքով կամ հոդվածում թվարկված այլ ձևերով:

Ստացվում է՝ շահագործման դեպքում, հանցագործությունից տուժած անձը ենթարկվում է բռնության, խաբեության կամ հարկադրանքի այլ ձևերի օրգանները վերցնելու նպատակով: Այս դեպքում անձի մարմինը ուղղակիորեն ենթարկվում է միջամտության օրգանը վերցնելու նպատակով: Ընդ որում հարկադրանքի, խաբեության, վստահությունը չարաշահելու կամ 188-րդ հոդվածով նախատեսված գործողություններից մեկի դրսևորումը պարտադիր է շահագործման առկայության համար:

Ինչպես արդեն իսկ նշվեց, «մարդու օրգանների ապօրինի շրջանառությունը» և «մարդու թրաֆիքինգը կամ շահագործումը» հանցակազմերը միմյանցից տարբերվում են նրանով, որ շահագործման առարկան մարդն է, որը շահագործվում է նրա օրգանը վերցնելու նպատակով, իսկ օրգանների ապօրինի շրջանառությունը հանցագործություն է, որի առարկան օրգանն է, և այս դեպքում անձի շահագործումը բացակայում է:

Մարդու օրգանը վերցնելու գործընթացը կարող է դրսևորվել, օրինակ առանց դոնորի համաձայնության կամ առանց բավարար տեղեկատվություն տրամադրելու այն հեռացնելու դեպքում կամ էլ, երբ հեռացվում է փոխպատվաստման ոչ ենթակա օրգան: Այս իրավիճակներում անձը ենթարկվում է խաբեության կամ բռնության, որով և, ի թիվս այլնի, դրսևորվում է Օրենսգրքի 188-րդ հոդվածով նախատեսված հանցագործությունը: Այսինքն, օրգանների ապօրինի շրջանառության հանցակազմը մարդու շահագործման առկայության դեպքում չի դրսևորվի:

Օրենսգիրքը պատասխանատվություն է նախատեսում նաև մարդու օրգանները և (կամ) հյուսվածքները ապօրինի իրացնելու համար:

«Իրացնել» հասկացությունը իրենից ենթադրում է որևէ առարկա շրջանառության մեջ դնելը. կարող է դրսևորվել վաճառելու, նվիրելու, պարտքի դիմաց տալու և այլ միջոցներով: Այս գործողությունների ապօրինության չափանիշը շատ հաճախ պայմանավորված է Օրենքի 2-րդ հոդվածով ամրագրված օրգանները և կամ հյուսվածքները շահույթի աղբյուր դարձնելու արգելքով: Այս դեպքում հանցագործության առարկան ձեռք բերողին կարող է ներկայացվել դրամական կամ որևէ առավելություն ենթադրող որոշակի պահանջ կամ էլ կարող է տրվել առանց այդ պահանջի նախկինում որևէ անձի նկատմամբ ունեցած պարտքի դիմաց կամ այլ պատճառներով:

Օբյեկտիվ կողմի հաջորդ դրսևորումը հանցագործության առարկան «պահելու» գործողությունն է, որը որպես այդպիսին իր ամրագրումն է ստացել 2021 թվականի մայիսի 5-ին ընդունված ՀՀ քրեական օրենսգրքով: Այն դրսևորվում է հանցագործության առարկան որոշակի տարածքներում կամ այնպիսի վայրերում պահելու մեջ, որոնք ապահովում են դրանց պահպանությունը: Սույն հանցակազմի տվյալ օբյեկտիվ կողմի դեպքում արարքը մեկանգամյա բնույթ չունի. այն տևական ժամանակահատվածում անընդհատ իրականացվող գործողություն է իրենից ենթադրում:

Հանցագործության առարկան «փոխադրելու» դրսևորումը հանդես է գալիս այն տեղափոխելու միջոցով, այսինքն այս դեպքում հանցագործության առարկան

տեղափոխվում է մի վայրից մեկ այլ վայր: Հատկանշական է, որ սույն գործողությունը ներառում է նաև ներմուծման, արտահանման գործողությունները:

Ընդ որում, Օրենքը արգելում է փոխպատվաստման նպատակով դոնորական օրգանների և (կամ) հյուսվածքների արտահանումը Հայաստանի Հանրապետությունից, իսկ ներմուծման հետ կապված հարաբերությունները, որոնք վերաբերում են Եվրասիական տնտեսական միության անդամ չհանդիսացող երկրից (այսուհետ՝ երրորդ երկրից) Հայաստանի Հանրապետության տարածք փոխպատվաստման նպատակով մարդու դոնորական օրգանների և (կամ) հյուսվածքների ներմուծման, արյան և դրա բաղադրամասերի՝ երրորդ երկրից ներմուծման, Հայաստանի Հանրապետության տարածքից երրորդ երկիր արտահանման հետ կապված հարաբերություններին, կարգավորվում են Կառավարության 2016 թվականին ընդունված թիվ 335-Ն որոշմամբ[26]:

Այսինքն, ներպետական կարգավորմամբ հստակ ամրագրվել է օրգանները արտահանելու արգելքը՝ չնախատեսելով որևէ բացառություն. յուրաքանչյուր դեպքում դրանց արտահանումը դիտվում է ապօրինի և հանգեցնում քրեական պատասխանատվության այս հանցակազմի շրջանակներում:

Մարդու օրգանների ապօրինի շրջանառության օբյեկտիվ կողմի վերջին դրսևորումը առաքման գործողությունն է, որն իրենից ենթադրում է մատակարարման ծառայություն, այսինքն երբ հանցագործության առարկան ուղարկվում է սահմանված հասցեով: Առաքման հիմնական նպատակը որոշակի վարձատրության կամ այլ առավելության դիմաց գործողություն կատարելն է, և այս պարագայում ստացվում է, որ առաքումը ամրապնդում է հանցավոր շղթան և օրգանը ձեռք բերողը հասնում է իր հանցավոր նպատակին, և այդ կերպ ապահովվում «սև շուկայի» կենսագործումը:

Կարևոր է ընդգծել, որ նախքան վերը նշված գործողություններով օրգանների ապօրինի շրջանառության դրսևորումը, մեծ ազդակ կարող է ունենալ նաև մարդու օրգանների վաճառքի գովազդը, քանի որ մարդու օրգանների առուվաճառքը տարածված է ոչ միայն իրական, այլև վիրտուալ աշխարհում: Գովազդային առաջարկների կապակցությամբ դեպքեր արձանագրվել են հաճախ բժշկական կենտրոնների կողմից: Մասնավորապես «Dr. Uba» բժշկական կենտրոնի կողմից պատրաստվել են «Շտապո՞ւմ եք գումար աշխատել» վերնագրով պաստառներ, որով առաջարկվում էին որոշակի գումարներ աչքեր, երիկամ կամ, օրինակ, լեզու վաճառելու համար[27]:

Վերոշարադրյալից ակնհայտ է, որ մարդու օրգանների ապօրինի շրջանառության դրսևորման համար հանցավորների կողմից կարող են օգտագործվել

---

[26] Տե՛ս ՀՀ կառավարության «փոխպատվաստման նպատակով մարդու դոնորական օրգանների և (կամ) հյուսվածքների ներմուծման, արյան և դրա բաղադրամասերի, թմրամիջոցների, հոգեմետ (հոգեներգործուն) նյութերի կամ դրանց պրեկուրսորների ներմուծման և արտահանման կարգը ու դրանց ցանկերը հաստատելու և Հայաստանի Հանրապետության կառավարության 2007 թվականի ապրիլի 26-ի N 551-ն որոշումն ուժը կորցրած ճանաչելու մասին» թիվ 335-Ն որոշում, 2016թ:

[27] Տե՛ս, Eyewitness News, В ЮАР для фильма ужасов запустили рекламу о продаже органов, https://lenta.ru/news/2011/02/25/organs/ 2011 (доступ՝ 15.07.2025).

տարբեր միջոցներ, որոնցից է գովազդը, քանի որ այն անհատի և հասարակության վրա տեղեկատվական և հոգևոր ազդեցություն գործելու սոցիալապես նշանակալից ձևերից մեկն է:

Ներպետական օրենսդրությամբ անդրադարձ է կատարվել նաև մարդու օրգանների կապակցությամբ գովազդին առնչվող կարգավորումներին: Մասնավորապես, «Գովազդի մասին» օրենքի 15-րդ հոդվածի 7[5]-րդ մասի համաձայն՝ արգելվում է մարդու օրգանների և հյուսվածքների առևտրային (կոմերցիոն) բնույթ կրող գովազդը: Ավելին, այս պահանջի խախտման դեպքում 1985 թվականին ընդունված և մինչ 2024 թվականի ապրիլի 11-ի խմբագրությամբ ՀՀ վարչական իրավախախտումների վերաբերյալ օրենսգրքով[28] նախատեսվում էր վարչական պատասխանատվություն՝ տուգանքի կիրառմամբ:

2024 թվականի ապրիլի 11-ի խմբագրությամբ, ինչպես նաև ներկայումս գործող ՀՀ վարչական իրավախախտումների վերաբերյալ օրենսգրքով բացակայում են մարդու օրգանների և հյուսվածքների առևտրային (կոմերցիոն) բնույթ կրող գովազդ իրականացնելու համար պատասխանատվություն սահմանող կարգավորումները:

Այսինքն, ստացվում է մի իրավիճակ, երբ մարդու օրգանների առևտրային (կոմերցիոն) բնույթ կրող գովազդ իրականացնելը արգելվում է օրենսդրությամբ՝ «Գովազդի մասին» օրենքով, սակայն ո՛չ ՀՀ վարչական իրավախախտումների վերաբերյալ օրենսգրքով և ո՛չ էլ ՀՀ քրեական օրենսգրքով նախատեսված չեն պատասխանատվություն սահմանող նորմեր այդպիսի բնույթի գովազդների իրականացման համար:

Գովազդի կապակցությամբ նախատեսվող պատասխանատվության մասով կարևոր է համեմատական անցկացնել ՀՀ քրեական օրենսգրքով ամրագրված մի շարք հանցակազմերի հետ: Որպես օրինակ՝ «Թմրամիջոցների, հոգեմետ (հոգեներգործուն) նյութերի, դրանց պատրաստուկների կամ դրանց համարժեք նյութերի (անալոգի) կամ դրանց ածանցյալների ապօրինի շրջանառությունն իրացնելու նպատակով կամ դրանք ապօրինի իրացնելը» վերտառությամբ 393-րդ հոդվածով ամրագրված հանցագործության համար ՀՀ քրեական օրենսգիրքը պատասխանատվություն է նախատեսում դրա օբյեկտիվ կողմի դրսևորում հանդիսացող հանցագործության առարկան գովազդելու համար, որը կատարվում է այն իրացնելու նպատակով:

Վերոգրյալից ակնհայտ է, որ Օրենսգիրքը, հաշվի առնելով որոշակի հանցագործությունների բարձր հանրային վտանգավորությունը, դրանց օբյեկտիվ կողմի դրսևորումներում հանցավոր արարք է դիտարկել նաև գովազդի իրականացումը:

Ավելին, եթե վերը շարադրված հանցագործությունների օբյեկտը բնակչության առողջությունն է, ապա քննարկվող հանցակազմի օբյեկտը, մարդու կյանքն ու առողջությունն են, որն ավելի լայն հասկացություն է, ներառում է բնակչության առողջության ուղղված հարաբերությունները և որն էլ պայմանավորում է նրա բարձր հանրային վտանգավորության առկայությունը: Ընդ որում, կարևոր է ուշա-

[28] Տե՛ս «Վարչական իրավախախտումների վերաբերյալ» ՀՀ օրենսգիրք, ընդունվել է 06.12.1985, ուժի մեջ մտել 01.06.1986, ՀՍՍՀԳՍ 1985/23, հ. 47-4:

դրություն դարձնել նաև այն հանգամանքին, որ սույն հանցակազմը իր հանրային վտանգավորությամբ չի զիջում վերը թվարկված հանցագործություններին:

Հաշվի առնելով վերոշարադրյալը և այն, որ ներկայումս մարդու օրգանների կոմերցիոն բնույթի գովազդի իրականացման համար պատասխանատվություն նախատեսող նորմերը բացակայում են՝ առաջարկում ենք մարդու օրգանների կոմերցիոն բնույթի գովազդի համար նախատեսել քրեական պատասխանատվություն և այն դիտարկել քննարկվող հանցակազմի օբյեկտիվ կողմի դրսևորում:

Բացի ներկայացված հիմնական հանցակազմից Օրենսգիրքը պատասխանատվություն է նախատեսում նաև միևնույն օբյեկտի դեմ ուղղված, միևնույն առարկան ունեցող և օբյեկտիվ կողմերով դրսևորվող որակյալ հանցակազմի համար:

ՀՀ քրեական օրենսգրքի 183-րդ հոդվածի 2-րդ մասով ավելի խիստ պատասխանատվություն է նախատեսվում այն դեպքերում, երբ սույն հանցագործության օբյեկտիվ կողմը հանդիսացող արարքը կատարվել է մի խումբ անձանց կողմից նախնական համաձայնությամբ, կամ իշխանական կամ ծառայողական լիազորությունները կամ դրանցով պայմանավորված ազդեցությունն օգտագործելով, կամ անզգուշությամբ առաջացրել է մարդու մահ, առողջությանը ծանր վնասի պատճառում կամ այլ ծանր հետևանք:

Հանցակազմը որակյալ դարձնող հանգամանք է այն իշխանական կամ ծառայողական լիազորությունները կամ դրանցով պայմանավորված ազդեցությունն օգտագործելով հանցավոր արարքը կատարելը:

Հանցագործությունը կատարելու համար իշխանական լիազորությունների օգտագործումը ենթադրում է օրենքով կամ այլ իրավական ակտով պաշտոնատար անձին վերապահված իրավունքների չարաշահում՝ անօրինական գործունեություն ծավալելու նպատակով: Իշխանական լիազորությունները տարածվում են անորոշ անձանց շրջանակի վրա, և այս իրավիճակում պաշտոնատար անձի կողմից այդ լիազորություններն օգտագործվում են անձնական նպատակներով:

Ծառայողական լիազորությունները կապված են ավելի նեղ անձանց շրջանակի հետ: Այն բխում է աշխատանքային հարաբերությունների բնույթից՝ կապված որոշակի խումբ անձանց ղեկավարելու գործունեության հետ: Այս դեպքում լիազորությունների շրջանակը ավելի սահմանափակ է, ի տարբերություն իշխանական լիազորությունների:

Ինչ վերաբերում է իշխանական կամ ծառայողական լիազորություններով պայմանավորված ազդեցությունն օգտագործելուն, ապա այս պարագայում, կարող է օգտագործվել տվյալ պաշտոնի հեղինակությունը, դիրքը, և դա էլ ազդում է հանցագործության կատարման հեշտացման վրա:

Հաջորդ ծանրացնող հանգամանքը անզգուշությամբ մարդու մահվան առաջացումն է, առողջությանը ծանր վնասի պատճառումը կամ այլ ծանր հետևանքի առաջացումը: Օրենսդիրը այս հետևանքների առաջացման համար նախատեսել է մեղքի անզգուշության ձևի դրսևորումը:

Մարդու մահվան առաջացումը շահ հաճախ կարող է պայմանավորված լինել օրգանների անհամապատասխանությամբ կամ օրգանիզմների առանձնահատկու-

թյուններով: Առողջություն ասելով պետք է հասկանալ մարդկային օրգանիզմի բնական, նորմալ վիճակը, որը այս դեպքում խաթարվում է ծանր վնաս կրելու պատճառով, ընդ որում, ՀՀ քրեական օրենսգրքի 166-րդ հոդվածի 1-ին մասը հստակ նախատեսում է այն հանգամանքները, որոնց առաջացումը վկայում է առողջությանը պատճառված ծանր վնասի մասին:

Ինչ վերաբերում է մի խումբ անձանց կողմից նախնական համաձայնությամբ հանցանքը կատարելուն, ապա հարկ է նշել, որ մի խումբ անձանց կողմից նախնական համաձայնությամբ հանցանքի կատարումը հանցակցությանն ձևերից է, և սա դրսևորվում է այն դեպքում, երբ հանցագործությանը մասնակցել են այնպիսի համակատարողներ, որոնք նախքան հանցանքն սկսելը պայմանավորվել են հանցանքը համատեղ կատարելու մասին[29]:

Մինչդեռ, չի բացառվում, որ սույն հանցանքը կատարելու համար ստեղծված լինի հանցավոր կազմակերպություն: ՀՀ քրեական օրենսգրքի 50-րդ հոդվածի 3-րդ մասի կարգավորումներից բխում է, որ հանցավոր կազմակերպության առանձնահատկությունը կայանում է իր կայունության և համախմբվածության մեջ: Հետևաբար, աննպատակահարմար է հանցավոր կազմակերպության կողմից արարքի կատարումը, որն առավել մեծ հանրային վտանգավորություն է ներկայացնում, չդիտարկելը որպես ծանրացնող հանգամանք, այն պայմաններում, երբ մարդու օրգանների ապօրինի շրջանառությունը իրենից ենթադրում է մեծ առևտրային ցանց, իսկ հանցավոր կազմակերպության կողմից դրա իրականացումը կհեշտացնի գործընթացը: Ընդ որում, կարևոր է նշել, որ 2018 թվականի ապրիլի 7-ի խմբագրությամբ ՀՀ նախկին քրեական օրենսգրքի 125.1-րդ հոդվածի 2-րդ և 3-րդ մասերով արարքը ծանրացնող հանգամանքներ էին դիտարկվել մարդու օրգանների ապօրինի շրջանառության դրսևորումը մի խումբ անձանց կողմից՝ նախնական համաձայնությամբ և կազմակերպված խմբի կողմից: Այսինքն, նախկին իրավակարգավորումները ևս փաստում են այն, որ օրենսդրի կողմից ի սկզբանե չի բացառվել հանցանքը կատարելու համար հատուկ խմբի ստեղծման հնարավորությունը:

Վերոգրյալով պայմանավորված՝ առաջարկում ենք քննարկվող հանցակազմի ծանրացնող հանգամանք նախատեսել նաև հանցանքի կատարումը հանցավոր կազմակերպության կողմից:

Ողջ վերոշարադրյալից ակնհայտ է, որ Օրենսգրքի կողմից սպառիչ թվարկում են հանցակազմը որակյալ դարձնող հանգամանքները, որը որոշակի խնդիրներ կարող է առաջացնել: Մասնավորապես, օրենսդիրը հաշվի չի առել նաև այն դեպքերը, երբ սույն հանցավոր արարքը կատարվում է ավելի թույլ պաշտպանվածություն ունեցող անձանց նկատմամբ. այդպիսիք են հղի կինը, անչափահասը, անօգնական, խոցելի կամ հանցավորից կախյալ վիճակում գտնվող անձինք:

Հղի կնոջ նկատմամբ հանցավոր արարքի դրսևորման առանձնահատկությունն այն է, որ առաջանում է անհրաժեշտություն պաշտպանելու թե՛ չծնված երեխային

[29] Տե՛ս ՀՀ քրեական օրենսգիրք, ՀՕ-199-Ն, Միասնական կայք 2021.05.17-2021.05.30, ընդունվել է 05.05.2021, ուժի մեջ մտել 01.07.2022, հ. 50, 2-րդ մաս:

և թե՛ հղի կնոջը: Հղի կնոջ հատուկ պաշտպանությունը հատկապես կարևորվում է նրա կարգավիճակով: Ընդ որում այս ծանրացնող հանգամանքի դրսևորման համար անհրաժեշտ չէ հղիության ակնհայտությունը, բավարար է, որ հանցավորը գիտակցի, որ արարքը կատարում է հղի կնոջ նկատմամբ: Այս գիտակցական մակարդակը վերաբերում է նաև հաջորդիվ քննարկվող անձանց նկատմամբ հանցանքի կատարման դեպքերին:

Որպես ծանրացնող հանգամանք հանցանքի կատարումը անչափահասի, անօգնական, խոցելի կամ հանցավորից կախյալ վիճակում գտնվող անձի նկատմամբ կատարելը ներառելը կարևորվում է նրանով, որ հանցավորների կողմից որպես թիրախներ ընտրվում են առավել թույլերն ու խոցելիները:

Անօգնական վիճակում գտնվող անձը Օրենսգրքի տեսանկյունից դիտարկվում է որպես անձ, որը իր ֆիզիկական կամ հոգեկան վիճակով պայմանավորված ի վիճակի չէ դիմադրություն ցույց տալ կամ ղեկավարել իր արարքը կամ գիտակցել իր նկատմամբ կատարվող արարքի բնույթը, ինչպես նաև 12 տարին չլրացած անձը: Անձի անօգնական վիճակում գտնվելը կարող է պայմանավորվել ինչպես ֆիզիկական, այնպես էլ հոգեբանական առումով: Եվ այն դեպքում, երբ հանցանքը կատարվում է այս անձի նկատմամբ, արարքը չպետք է որակվի հասարակ հանցակազմով:

Թեև Օրենսգրքի 189-րդ հոդվածը նախատեսում է երեխայի կամ անօգնական վիճակում գտնվողի թրաֆիքինգը, որում շահագործումը մեկնաբանվում է 188-րդ հոդվածի 4-րդ մասի իմաստով՝ այդպիսին դիտարկելով միայն օրգանները և (կամ) հյուսվածքները վերցնելու նպատակով շահագործումը, այնուամենայնիվ այս դեպքում հոդվածը չի ներառում օրգանների ապօրինի շրջանառության բոլոր դրսևորումները, ինչպիսիք են օրգանները իրացնելը, պահելը, փոխադրելը կամ առաքելը, և եթե օրինակ օբյեկտիվ կողմը հանդիսացող գործողություններից մեկը կատարվի նրանց նկատմամբ կստացվի, որ որակվելու է կրկին հասարակ հանցակազմով, այնինչ վերոնշյալ անձինք հատուկ պաշտպանության կարիք ունեն՝ պայմանավորված իրենց կարգավիճակով:

Խոցելի վիճակում գտնվող անձի կապակցությամբ Օրենսգիրքը ևս նախատեսել է առանձնահատուկ մեկնաբանություն, այդպիսին դիտարկելով այն վիճակը որում հայտնված անձը չունի իր համար ընդունելի այլընտրանք, քան ենթարկվելու իր նկատմամբ կատարվող չարաշահմանը[30]:

Ինչ վերաբերում է հանցավորից կախյալ վիճակում գտնվող անձին, ապա այդպիսին պետք է դիտարկել հանցավորից ֆինանսական կամ այլ կախվածություն ունեցող անձին:

Հաշվի առնելով ողջ վերոշարադրյալը՝ առաջարկում ենք որպես հանցակազմի ծանրացնող հանգամանք նախատեսել հանցավոր արարքի կատարումը հղի կնոջ, անչափահասի, անօգնական, խոցելի կամ հանցավորից կախյալ վիճակում գտնվող անձի նկատմամբ:

---

[30] Տե՛ս ՀՀ քրեական օրենսգիրք, ՀՕ-199-Ն, Միասնական կայք 2021.05.17-2021.05.30, ընդունվել է 05.05.2021, ուժի մեջ մտել 01.07.2022, հ. 3, 1-ին և 4-րդ կետեր:

Անդրադառնանք սույն հանցակազմի սուբյեկտին առնչվող առանձնահատկություններին: Օրենսգրքով ամրագրված մարդու օրգանների ապօրինի շրջանառություն հանցագործության համար քրեական պատասխանատվության ենթակա են ֆիզիկական անձինք և իրավաբանական անձինք, այդ թվում՝ բժշկական հաստատությունները, քանի որ Օրենքի 4-րդ հոդվածի համաձայն՝ փոխպատվաստման օրգաններ և (կամ) հյուսվածքներ վերցնելն ու մշակելը, ինչպես նաև փոխպատվաստելը թույլատրվում է միայն համապատասխան լիցենզավորված բժշկական հաստատություններում:

Օրենսգրքի 183-րդ հոդվածի 2-րդ մասը սահմանում է հանցակազմը որակյալ դարձնող հանգամանքները, որոնց մեջ, ի թիվս այլնի, նախատեսվել է կամ ծառայողական լիազորությունները կամ դրանցով պայմանավորված ազդեցությունն օգտագործելով արարքը կատարելը: Նշյալից բխում է, որ ՀՀ քրեական օրենսգիրքը այս հանգամանքի դեպքում որպես պատասխանատվության ենթակա անձ դիտարկում է հատուկ սուբյեկտին:

Այս կապակցությամբ հատկանշական է, որ մասնագիտական գրականության մեջ ձևավորվել է այն մոտեցումը, որ օրգանների «առևտրային շղթայի» մեջ էական ազդեցություն ունի նաև այսպես կոչված «բրոքերների» դերակատարումը[31]: Միջնորդները կատարում են մի շարք տարբեր գործառույթներ՝ ներգրավված են օրգան վաճառողների հավաքագրման, վարձավճարների վերաբերյալ բանակցությունների, «պաշտոնական» փաստաթղթերի պատրաստման աշխատանքներին և, ամենակարևորը, պատասխանատու են գնորդներին վաճառողների հետ կապելու համար[32]:

Հարկ է նշել, որ միջնորդի քրեական պատասխանատվության նախատեսումը նպատակահարմար կարող է լինել նաև մարդու օրգանների ապօրինի շրջանառության հանցակազմի դեպքում, քանի որ նրա դերը կարող է նպաստել այս հանցակազմով պատասխանատվության ենթակա սուբյեկտների միջև համաձայնության գալուն:

Միջնորդը կարող է հանդես գալ կապող օղակ, օրինակ հանցագործության առարկան իրացնողի և ձեռք բերողի միջև: Նա հանդես չի գալիս կողմերից որևէ մեկի դիրքերից, այլ իր նպատակը համաձայնության գալուն նպաստելն է, հակառակ պարագայում գործ կունենանք այս հանցակազմին օժանդակելու հետ:

ՀՀ քրեական օրենսգրքի 46-րդ հոդվածի 6-րդ մասի համաձայն՝ օժանդակող է համարվում այն անձը, որը հանցագործությանը նպաստել է խորհուրդներով, ցուցումներով, տեղեկություններ կամ միջոցներ, գործիքներ տրամադրելով կամ խոչընդոտները վերացնելով, ինչպես նաև այն անձը, որը նախապես խոստացել է պարտակել հանցագործին, հանցագործության միջոցները կամ գործիքները,

[31] Տե՛ս Martial T. Harvesting vulnerability: The challenges of organ trafficking in armed conflict, 2022թ, էջ 18, https://international-review.icrc.org/articles/harvesting-vulnerability-the-challenges-of-organ-trafficking-in-armed-conflict-923 (accessed՝ 13.07.2025).

[32] Տե՛ս Columb S. Excavating the organ trade: an empirical study of organ trading networks in Cairo, Egypt 2016թ, էջ 7:

հանցագործության հետքերը կամ հանցավոր ճանապարհով ձեռք բերված առարկաները, ինչպես նաև այն անձը, որը նախապես խոստացել է ձեռք բերել կամ իրացնել այդպիսի առարկաները:

Վերոգրյալից բխում է, որ օժանդակողը վերը նշված գործողությունները կատարում է արդեն իսկ պլանավորված հանցագործության պարագայում, և հանդես է գալիս հանցավորի դիրքերից, իսկ միջնորդության դեպքում սա բացակայում է:

Այսպիսով, նպատակահարմար ենք համարում մարդու օրգանների ապօրինի շրջանառության միջնորդության համար քրեական պատասխանատվության նախատեսումը:

Եզրակացություն

Մարդու սաղմի, պտղի, մարդու կամ դիակի բջիջների, հյուսվածքների, օրգանների կամ կենսաբանական նյութերի կամ հեղուկների ապօրինի շրջանառությունը միջազգայնորեն ճանաչված հիմնախնդիրներից մեկն է, որը խախտում է մարդու հիմնարար իրավունքները և անմիջական վտանգ ներկայացնում մարդու առողջության համար:

Սույն հանցակազմի հիմնական անմիջական օբյեկտը մարդու կյանքն ու առողջությունն է, և սա լուրջ մարտահրավեր է բոլոր պետություններին քայլեր ձեռնարկելու հանցակազմի, ինչպես նաև դրա ազդեցությունների չեզոքացման համար:

Ելնելով վերոգրյալից՝ մարդու օրգանների ապօրինի շրջանառության և դրան առնչվող իրավական ակտերի բարելավման և կատարելագործման նպատակով ներկայացնում ենք հետևյալ առաջարկները՝

1. առաջարկում ենք Օրենքով փոխպատվաստման օրգաններ դիտարկել նաև աճեցված արհեստական օրգանները, ինչպես նաև Օրենսգրքի 183-րդ հոդվածում առանձնահատուկ վկայակոչել նաև աճեցված արհեստական կենսաբանական օրգանների ապօրինի շրջանառության մասին, քանի որ բլանկետային իրավանորմում օրգանը հանդես է գալիս որպես օրգանիզմի մաս, ինչը վկայում է դրա բնական վիճակում գտնվելու մասին, իսկ արհեստական օրգանը մարդու կողմից աճեցված օրգան է, որը նախատեսված է բնական օրգանի փոխարինման համար կամ նախատեսել առանձին հանցակազմ աճեցված արհեստական կենսաբանական օրգանների ապօրինի շրջանառության վերաբերյալ.
2. առաջարկում ենք նախատեսել քրեական պատասխանատվություն մարդու օրգանների կոմերցիոն բնույթի գովազդի համար և այն դիտարկել քննարկվող հանցակազմի օբյեկտիվ կողմի դրսևորում.
3. առաջարկում ենք որպես հանցակազմի ծանրացնող հանգամանք նախատեսել հանցավոր արարքի կատարումը հանցավոր կազմակերպության կողմից, հղի կնոջ, անչափահասի, անօգնական, խոցելի կամ հանցավորից կախյալ վիճակում գտնվող անձի նկատմամբ.
4. առաջարկում ենք մարդու օրգանների ապօրինի շրջանառությանը միջնորդելու համար նախատեսել քրեական պատասխանատվություն:

Գրականության ցանկ (reference list, список литературы)

1. ՀՀ Սահմանադրություն, ընդունվել է 06.12.2015թ., ուժի մեջ է մտել 22.12.2015թ.: ՀՀՊՏ 2015.12.21/ Հատուկ թողարկում Հոդ 1118:

RA Constitution, adopted on 06.12.2015, entered into force on 22.12.2015. RA Official Bulletin 2015.12.21/Special Issue Art. 1118:

2. Մարդու իրավունքների համընդհանուր հռչակագիր, ընդունվել է 10.12.1948., ուժի մեջ է մտել 10.12.1948.: 217 Ա III, Հիմնական ակտ (10.12.1948-մինչ օրս).

Universal Declaration of Human Rights, adopted on 10.12.1948, entered into force on 10.12.1948; 217 A III, Fundamental Act (from 10.12.1948 to present).

3. ՀՀ քրեական օրենսգիրք, ՀՕ-199-Ն, Միասնական կայք 2021.05.17-2021.05.30, ընդունվել է 05.05.2021, ուժի մեջ է մտել 01.07.2022:

Criminal Code of the Republic of Armenia, Unified Website 2021.05.17–2021.05.30, adopted on 05.05.2021, entered into force on 01.07.2022.

4. ՀՀ «Վարչական իրավախախտումների վերաբերյալ» օրենսգիրք, ընդունվել է 06.12.1985, ուժի մեջ է մտել 01.06.1986, ՀՍՍՀԳՍ 1985/23:

Code of the Republic of Armenia on Administrative Offenses, adopted on 06.12.1985, entered into force on 01.06.1986, ASSR Supreme Council Gazette 1985/23.

5. «Մարդուն օրգաններ և (կամ) հյուսվածքներ փոխպատվաստելու մասին» օրենք, ՀՕ-324, ընդունվել է 16.04.2002., ուժի մեջ է մտել 25.11.2002, ՀՀՊՏ 2002.05.29/16(191) Հոդ.347:

Law on human organ and/or tissue transplantation, adopted on 16.04.2002, entered into force on 25.11.2002, RA Official Bulletin 2002.05.29/16(191), Article 347.

6. Կառավարության 2016 թվականի մարտի 31-ի թիվ 335-ն որոշում, ուժի մեջ է մտել 23.04.2016, ՀՀՊՏ 2016.04.13/31(1211) Հոդ.325.

Government Decision No. 335-N of 31.03.2016, entered into force on 23.04.2016, RA Official Bulletin 2016.04.13/31(1211), Article 325.

7. Երևան քաղաքի առաջին ատյանի ընդհանուր իրավասության քրեական դատարանի 2012 թվականի հուլիսի 31-ի թիվ ԵԿԴ/0107/01/12 քրեական գործով կայացված դատավճիռ.

Verdict delivered on 31.07.2012, in criminal case No. EKD/0107/01/12 by the Criminal Court of First Instance of General Jurisdiction of Yerevan.

8. Council of Europe Convention against Trafficking in Human Organs, Santiago de Compostela, 25.III.2015, Council of Europe Treaty Series - No. 216.

9. The declaration of Istanbul on organ trafficking and transplant tourism, (convened by The Transplantation Society and International Society of Nephrology in Istanbul, Turkey, April 30- May 2, 2008.

10. United Nation Convention against Organized Crime, Palermo protocol, Palermo, Italy, 12-15 December, 2000.

11. Bioartificial Organ Manufacturing Technologies: https://www.ncbi.nlm.nih.gov/pmc/articles/PMC6322143/. (accessed՝ 10.07.2025).

12. Columb S., Excavating the organ trade: an empirical study of organ trading networks in Cairo, Egypt British Journal of Criminology Advance Access published August 27, 2016.

13. Francis L. P., Artificial and transplanted organs:movable parts and the unmovinglaw. https://collections.lib.utah.edu/dl_files/d9/3c/d93c0ad84136b70954f82d914c07c6a2574b9678.pdf (accessed՝ 01.07.2025).

14. International Organ Trafficking: In Brief, 2021.International Organ Trafficking: In Brief - EveryCRSReport.com (accessed՝ 01.07.2025).

15. Martial T., Harvesting vulnerability: The challenges of organ trafficking in armed conflict, 2022. https://international-review.icrc.org/articles/harvesting-vulnerability-the-challenges-of-organ-trafficking-in-armed-conflict-923 (accessed՝ 13.07.2025).

16. May C., Transnational Crime and the Developing World. Global Financial Integrity, 27.03.2017.

17. Movassagh H., human organ donations under the "Iranian model": a rewarding scheme for U.S. 2016.https://www.latimes.com/world/middleeast/la-fg-iran-kidney-20171015-story.html(accessed՝ 10.07.2025).

18. Negri S., The Criminal Justice Response to Organ Trafficking and Trafficking in Human Beings for Organ Removal. https://www.researchgate.net/publication/322745882_The_Criminal_Justice_Response_to_Organ_Trafficking_and_Trafficking_in_Human_Beings_for_Organ_Removal (accessed՝ 01.07.2025).

19. PietrobonA.Challenges in Implementing the European Convention against Trafficking in Human Organs, Cambridge University Press:29 April 2016.

20. Who guiding principles on human cell, tissue and organ transplantation, WHO/HTP/EHT/CPR/2010.01 https://iris.who.int/bitstream/handle/10665/341814/WHO-HTP-EHT-CPR-2010.01-eng.pdf?sequence=1 (accessed՝ 06.07.2025).

21. World's Largest Database of Information Science & Technology Terms & Definitions, https://www.igi-global.com/dictionary/artificial-organs/1524. (accessed՝ 01.07.2025).

22. Eyewitness News, В ЮАР для фильма ужасов запустили рекламу о продаже органов, https://lenta.ru/news/2011/02/25/organs/. 2011.

Eyewitness News. In South Africa, a horror movie was promoted with an advertisement for organ sales. https://lenta.ru/news/2011/02/25/organs/ 2011. (accessed՝ 15.07.2025).

23. Адаскин А. В. Дистанционный мониторинг пациентов с системой длительной механотронной поддержки кровообращения / А. В. Адаскин, К. Н. Дозоров, И. А. Филатов, Г. П. Иткин // Вестник трансплантологии и искусственных органов. – 2016. – Т. 8, № 2.

Adaskin, A. V., Dozorov, K. N., Filatov, I. A., &Itkin, G. P. (2016). Remote monitoring of patients with a long-term mechatronic circulatory support system. Bulletin of Transplantology and Artificial Organs, 8(2), 65–73.

24. БелоусоваЕ. В., Виноградова Л. С. Создание искусственных органов человека как перспективный способ совершенствования его природы, 2019. https://vestnik.gu-ural.ru/documents/articles/2019/2/2019-2-belousova-vinogradova.pdf. (доступ՝ 08.07.2025).

Belousova, E. V., &Vinogradova, L. S. Creation of artificial human organs as a promising way to improve human nature. 2019.

25. Боровых Я.Ф. Торговля человеческими органами, Фундаментальные и прикладные исследования, 2015.

Borovykh, Ya. F. Trade in human organs. Fundamental and Applied Research. 2015.

26. Галеева Г.Р. Общая характеристика возникновения и обострения проблемы незаконного транснационального оборота органов человеческого тела, УДК: 341+349 ББК: 67.412.12016.

Galeeva, G. R. General characteristics of the emergence and escalation of the problem of illegal transnational trafficking in human body organs. UDC: 341+349, BBK: 67.412.1. 2016.

27. Материалы для создания искусственных органов. Пересадка органов – выращивание органов для человека. Гибриды среди нас, 2020. https://dzen.ru/a/XnzaWvYqbXTIAYM0.(доступ՝ 15.07.2025).

Materials for creating artificial organs. Organ transplantation – growing organs for humans. Hybrids among us. 2020.

Anahit Babakhanyan
Assistant to the Prosecutor General of the Republic of Armenia

CRIMINAL LIABILITY FOR ILLEGAL TRAFFICKING OF HUMAN ORGANS[33]

Abstract

Illegal Organ Trafficking constitutes a crime against human life and health, the commission of which already poses a threat to social relations protected by law.

The article examines the essence of the institute of criminal liability for illegal trafficking of human organs, addressing both domestic and international legal regulations. The work presents the circumstance of this crime being a global problem. Through comparative analysis with previous legal regulations and addressing the differentiation between this crime and human trafficking, the criminal-legal characteristics of the crime have been analyzed. Specifically, attention has been given to the prohibition established by legislation regarding the advertisement of the commercial nature of human organs and the related legislative gaps and contradictions, the risks of illegal trafficking in connection with artificially grown organs within the framework of the crime's object, and the issues of comprehensive legislative definition of circumstances that qualify the illegal act.

As a result of the conducted research, the author has proposed establishing criminal liability also for illegal trafficking of artificially grown biological organs, for advertising the commercial nature of human organs, as well as for mediating in illegal trafficking of human organs. It has also been proposed to establish as an aggravating circumstance of the criminal composition the commission of the criminal act by a criminal organization, against a pregnant woman, a helpless, vulnerable person, or a person in a dependent state from the criminal.

Keywords: organ trafficking; organ transplantation; artificially grown organs; commercial advertising of human organs and tissues; transplant tourism; "black market of transplants" or "red market."

[33]The article was presented on 11.08.2025 and was reviewed on 16.09.2025.

Анаит Бабаханян
Помощник Генерального прокурора Республики Армения

УГОЛОВНАЯ ОТВЕТСТВЕННОСТЬ ЗА НЕЗАКОННЫЙ ОБОРОТ ЧЕЛОВЕЧЕСКИХ ОРГАНОВ[34]

Абстракт

Незаконный оборот органов является одним из преступлений против жизни и здоровья человека, совершение которого уже представляет угрозу для общественных отношений, защищаемых законом.

В статье рассматривается сущность института уголовной ответственности за незаконный оборот человеческих органов, затрагивая как внутригосударственные, так и международные правовые регулирования. В работе представляется обстоятельство данного преступления как глобальной проблемы. Проводя сравнение с предыдущими правовыми регулированиями и затрагивая разграничение данного преступления и торговли людьми, проанализированы уголовно-правовые характеристики преступления. В частности, обращено внимание на запрет, предусмотренный законодательством относительно осуществления рекламы коммерческого характера человеческих органов и связанные с этим законодательные пробелы и противоречия, на риски незаконного оборота в связи с искусственно выращенными органами в рамках предмета преступления, на проблемы исчерпывающего законодательного определения обстоятельств, квалифицирующих противоправное деяние.

В результате проведенного исследования автор предложил предусмотреть уголовную ответственность также за незаконный оборот искусственно выращенных биологических органов, за осуществление рекламы коммерческого характера человеческих органов, а также за посредничество в незаконном обороте человеческих органов. Предложено также предусмотреть в качестве отягчающего обстоятельства состава преступления совершение преступного деяния преступной организацией, в отношении беременной женщины, беспомощного, уязвимого или находящегося в зависимом от преступника состоянии лица.

Ключевые слова– торговля органами; трансплантация органов; искусственно выращенные органы; реклама коммерческого характера человеческих органов и тканей; трансплантационный туризм; «черный рынок трансплантатов» или «красный рынок».

---

[34]Статья была представлена 11.08.2025 и прошла рецензирование 16.09.2025.